խաց երկիրն, ումն մեծ իշխան Բան Հարպուրդ գնաց ի վերայ նորա և կա-
լաւ զնա. և կապանօք ղրկեցաւ առ Թագաւորն Զիկմունդ Ակուդուս, և
Թագաւորն չարչարանօք եսպան զինքն։ Եւ էր ինքն ստոյգ Շտեփան պարոնին
որդին. զոր և նշան այլ գտին ի վերայ նորա։

1565. Թվ. ՌԺԴ. Ապրիլի ամսոյ Գ. Վաղճանեցաւ պարոն Հրիհորն՝ որդի
Զատիկի, որ էր գլուխ Ժողովրդեանն և առաջադէմ ամենեցուն. և էր սի-
րեցեալ յաչս Թագաւորաց և ամենայն իշխանաց և մեծամեծաց. զոր բա-
զում բարութիւնս և երախտիք Թողեալ Հայոց ազգին իւրոյ. զոր 25 անկամ ի
Թագաւորի արքունի դուռն գնացեալ վասն դատաստանի իրաց, զոր կամէին Ի-
լախ ազգն ափշտակել ի ձեռաց Հայոց, և նորա գնացեալ ամրացոյց և հաստա-
տեաց զԴատաստանն (Դատաստանագիրք կամ Օրինագիրք), զոր այժմ ու-
նին Հայոց ազգ, և խաղաղութեամբ և հանտարտութեամբ վարեն զկեանս
իւրեանց, ողորմութեամբն Աստուծոյ և Թագաւորին, և պարոն Հրիհորին
ջանիւ և հոգաբարձութեամբ։ Զոր ողորմածն Աստուած ողորմի իւր հոգուն
և զմեզքն ընջէ, զկամայ և զակամայ. և իւր սուրբ արքայութեան արժանի
արասցէ հանդերձ իւրովք արեան մերձաւորաք. ամէն։

1566. Հայոց Թվ. ՌԺԵ. Յուլիս ամսոյ ԺԵ. Փառք Աստուծոյ Հօր ան-
մահի, և Որդւոյն Աստուծոյ միածնի, և Հոգւոյն Աստուծոյ ճշմարտի. այժմ
և յաւէտ յաւիտեանս. ամէն։ Եւ արդ պարտ է և արժան է մեզ՝ զայսպիսի
ամենայն ինչ գրով աւանդել. զի առ ապա եկեալքն ընթեռնլով փառս տայ-
ցեն Աստուծոյ։ Եթէ որպէս հրամանն Աստուծոյ եկն ի վերայ մեր՝ վասն ծո-
վացեալ մեզաց մերոց. այս ինքն է զոր եղաւ յայսմ ամի ի Կամենից քա-
ղաքիս, մեծ և անողորմելի ցասումն մահուն. ոչ թէ միայն ի վերայ ման-
կանց տղայոց, այլ ի վերայ երիտասարդաց և ծերոց, զոր ամենայն օր ի
մէջ Հայոց ազգիս ութ և ինն և մինչեւ ի տասն հոգի ի հողն թաղէաք. և այս
երկարեցաւ ի յուլիս ամսոյ մինչեւ հոկտեմբեր։ Եւ այլազգիքն Ֆռանգ և
Ռուզն՝ ամենայն օրն մինչեւ ի 60 հոգի թաղելով ի հող դնէին։ Եւ զի էր
դառն և դժար ժամանակ, զի ոչ ոք ի քաղաքս ոչ գայր, և բնաւ ի քա-
ղաքացոյն զոք ուրեք չէին թողուլ. մինչ որ քաղցրութիւն Աստուծոյ յայտ-
նեցաւ ի վերայ մեղաւոր ծառայից իւրոց։ Եւ զի էր ահագին ցասումն, որ
մինչեւ երկրորդում և երրորդում օր ողջ և առողջ գոլով մարդիքն՝ ի հողն
դնէին. բայց Աստուծոյ կամքն օրհնեալ եղիցի. զոր նմա փառք ի յամենայն
արարածոց և ի մէնջ։ Զոր ինչ եկն ի վերայ մեր՝ վասն մեր չար գործոց
և անթիւ մեղաց մերոց եկն. զի զոր ինչ ետուր և զոր տալով է, զոհու-
թեամբ ընդունեմք և ընդունելոց եմք։

1566. Թվ. ՌԺԵ. և սեպտեմ. ԻԴ. Աստուած ամենակալ ողորմի Պար.
Հրիհորին հոգոյ. զոր նորա արդեամբք բարեպաշտ կինն իւր Բանի Ազիզբ՝
զհրաշալի տաճարն Սրբոյ Նիկոլա մեծացոյց, և այլ վայելչապէս զարդա-
րեցոյց և գեղեցկացոյց, ի փառս անհաս աստուածութեան Տեառն մերոյ Յի-